

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՇՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 9

ք. Երևան

25.12.2009թ.

Ներկա էին խորհրդի 70 անդամներից 60-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

Օրակարգում .

1. Երևանի պետական համալսարանի 2008/2009 ուսումնական տարվա գործումնության վերաբերյալ ռեկտորի հաշվետվության գնահատում:
2. Երևանի պետական համալսարանի 2009 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի կատարողականի հաստատում:
3. Երևանի պետական համալսարանի 2010թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հաստատում:
4. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թ.) հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

ԵՊՀ խորհրդի նախագահ Մերժ Սարգսյան - Երևանի պետական համալսարանի խորհրդի հարգելի անդամներ ավարտին է մոտենում 2009 թվականը և ձևավորված ավանդույթի համաձայն տարեվերջին մենք անցկացնում ենք մեր խորհրդի տարվա վերջին նիստը՝ նպատակ ունենալով անփոփոք տարվա ընթացքում կատարած աշխատանքները, նշելու հաջողություններն ու բացթողումները: Նախորդ նիստից հետո կյանքից հեռացել են մեր խորհրդի երկու անդամներ <<ԳԱԱ ակադեմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ավետիսյանը և << ոստիկանապետի տեղակալ Գևորգ Մհերյանը: Առաջարկում եմ մեկ րոպե լոռությամբ հարգենք մեր կոլեգաների հիշատակը:

Այս տարին հոբելյանական էր բոլորիս համար, լրացավ մեր համալսարանի 90-ամյակը: Ասելով մեր նկատի ունեմ ոչ միայն խորհրդի անդամներին, այլև ողջ հայ ժողովրդին, քանի որ Երևանի պետական համալսարանը մեր ժողովրդի պարծանքն է,

մեր գիտության, կրթության առաջատարը, որ իննսուն տարիների ընթացքում տվել է հարյուր հազարից ավել շրջանավարտ և որի շրջանավարտները, դասախոսները միշտ էլ հանդիսացել են և Հայաստանի հանրապետությունում, և Հայաստանի սոցիալական հանրապետությունում գիտության նոր ճյուղերի հիմնադիրներ, զարգացնողներ և հսկայական դերակատարում են ունեցել մեր ժողովրդի զարգացման գործում: Կարծում են, որ բոլորիս խնդիրն է այս ավանդույթները փայփայել, պահպանել, զարգացնել ի փառս մեր ժողովրդի, հանուն մեր պետության:

Այսօրվա խորհրդի նիստին մեր 70 գործընկերներից մասնակցում են 60-ը և մենք իրավունք ունենք սկսել նիստը: Եթե այլ առաջարկություններ չկան, ես առաջարկում եմ սկսել խորհրդի նիստը:

Եթե չկան առաջարկություններ օրակարգի վերաբերյալ, առաջարկում եմ անցնել օրակարգի առաջին հարցին և գեկուցելու համար խոսքը տրամադրել ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին:

1. ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2008/2009 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

Զեկույթական առաջարկությունը ԵՊՀ 2008/2009 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ

Ա. Սիմոնյան - ԵՊՀ խորհրդի մեծարգո՞ նախագահ, խորհրդի հարգարժա՞ն անդամներ, թույլ տվեք ներկայացնել Երևանի պետական համալսարանի գործունեությունը 2008/2009 ուսումնական տարում: Ես կանգ կառնեմ առավել հանգուցային խնդիրների վրա՝ նշելով հիմնական ձեռքբերումները և բացթողումները: Ուզում եմ նորից ընդգծել, որ հաշվետու տարին մեզ համար հոբեյանական էր և ամբողջովին անցել է իննսուն ամյակի նշանաբանով: Զերնարկվել են բազմաբնույթ միջոցառումներ բոլոր բնագավառներում, որոնք ամբողջացնում են ԵՊՀ գործունեությունը անցած ուսումնական տարում:

Կրթական գործունեության ոլորտում առաջին փաստը, որ ուզում եմ նշել կրեդիտային համակարգի ամբողջական ներդրումն էր Երևանի պետական համալսարանում՝ և բակալավրիատում, և մագիստրատուրայում բոլոր մասնագիտությունների գծով: Աշխատանքներ են տարվել նաև կրեդիտային համակարգը ասպիրանտուրայում ներդնելու ուղղությամբ: Աշխատանքները համակարգելու համար իրատարակվել են անհրաժեշտ մեթոդական կարգեր, փաստաթղթեր, նորմատիվ ակտեր և ծրագրի կառուցվածքն ամբողջությամբ տպագրված և բաժանված է ֆակուլտետներին, ամբիոններին, տեղեկացված են նաև ուսանողները:

Հետքուհական լրացուցիչ կրթության բնագավառում շարունակվել են աշխատանքները համալսարանի երիտասարդ դասախոսների և միջին օղակի վարչակազմի կրեդիտային համակարգի հիմնադրույթների և որակի ապահովման ներքուհական համակարգերի վերաբերյալ վերապատրաստումներ իրականացնելու ուղղությամբ: Մշակվել և կազմվել է համաեվրոպական նմուշի դիալոգի հավելված մագիստրոսական ծրագրի վերաբերյալ, որը ամբողջապես ներդրվել է, որի հիմնական նպատակն է մի կողմից Երևանի պետական համալսարանի կողմից շնորհված որակավորումների միջազգային ձանաչումը, իսկ մյուս կողմից հնարավորություն է տալիս մագիստրատուրայի շրջանավարտներին իրենց ուսումը շարունակելու արտասահմանյան բուհերում:

Չկայած ձեռքբերումներին, կրթական ոլորտում կցանկանայի նշել մեկ կարևոր թերություն. մեզ համար չափազանց մտահոգիչ է, որ առանձին ուսումնական միավորներում կա անտարբերություն և ոչ շահագրգիռ վերաբերմունք ընթացող բարեփոխումների նկատմամբ: Որպես թերություն պետք է նշել որ համապատասխան կառուցվածքային փոփոխությունները չեն ուղեկցվում հավասարագոր բովանդակային նորացմամբ և առ այսօր որոշ տեղերում չեն պահպանվում ելքային կրթական արդյունքները համապատասխան կրթական ծրագրերի նկատմամբ:

Հաշվետու ուսումնական տարում մեծ աշխատանք է տարվել կրթության որակի ապահովման ուղղությամբ՝ ինտենսիվ համագործակցելով Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Ճենովայի համալսարանի և Լոնդոնի Միջլսեքսի համալսարանի հետ դրամաշնորհային ծրագրի սահմաններում: Արդյունքում մենք կարող ենք ասել, որ ունենք կրթության որակի ապահովման հստակ ուղեծիր, որով շարժվելու ենք առաջիկա տարիներում: Որակի ապահովման հարցում կցանկանայի նշել այն հանգամանքը ևս, որ դասավանդման արդյունավետության բարձրացման գծով աշխատանքները միտված են եղել դասախոսական կազմի հմտությունների կատարելագործմանը, դրա արդյունավետության գնահատմանը: ԵՊՀ-ում այսօր գործում է դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման հիմնական ձևը, որը իրականացվում է ուսանողական ամենամյա հարցումների ձևով և տալիս է հարուստ տեղեկատվություն այս խնդրում որոշակի պատկերացումներ ունենալու ուղղությամբ բարեփոխումները շարունակելու ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքները պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրա աշխատածավալների օպտիմալացման, ինչպես նաև լսարանային ֆոնդի արդյունավետ օգտագործման և դասերի կազմակերպման ու վերահսկման գործառույթների կատարելագործման ուղղությամբ: Ներդրվել է վերապատրաստման որոշակի համակարգ, որը մշտապես գործում է և շարունակելու է գործել: Շատ են

կարևորում գիտելիքների գնահատման նոր, բազմագործոն համակարգի ներդրումը: Վերանյվել են ուսանողի առաջադիմության ցուցանիշները և գնահատման նոր համակարգին համապատասխան կազմվել և հրապարակվել են առանձին մոդուլ դասընթացների, քննությունների անցկացման ձևերը, գնահատման չափանիշները և համապատասխան ընթացակարգերը: Կազմվել են նաև քննությունների ամփոփածների և ուսանողների ստուգման գրքույկների նոր ձևեր: Այս բարեփոխումները ոչ միայն համապատասխանում են ընդունված միջազգային չափանիշներին, այլև գործուն մեթոդ են համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարին:

Ես կուգենայի առանձնացնել մինչհամալսարանական կրթության կենտրոնի աշխատանքները ընդունելության նախապատրաստման աշխատանքներում: Սկսել ենք ակտիվ համագործակցել միջնակարգ դպրոցների հետ ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում դիմորդների մասնագիտական նախասրությունները ուղղորդելու, մասնագիտական չափանիշները և համալսարանի հնարավորությունները, կրթական ծառայությունները ներկայացնելու ուղղությամբ: Մեր բոլոր ֆակուլտետները այստեղ մեծ ներդրում են ունեցել: Աշխատանքը այսօր էլ շարունակվում է և համալսարանին վերաբերվող ինֆորմացիան էլեկտրոնային ձևով նաև տարածվում է մայրաքաղաքում և մարզերում: Մենք ստանում ենք արձագանքներ, դիտողություններ, ցանկություններ դպրոցներից: Դրվատանքի են արժանի նաև այն ֆակուլտետները, որ սրանից բացի մասնակցել են նաև տարբեր օլիմպիադաների կազմակերպմանը:

Կցանկանալի նաև անդրադառնալ հետբուհական լրացուցիչ կրթության ուղղությամբ տարվող գործունեությանը: Մենք կարողացել ենք անցած ուսումնական տարվա ընթացքում որոշ կրթական ծրագրեր ներմուծել և որակավորման բարձրացման, վերավորակավորման աշխատանքներում ներգրավվել են ոչ միայն համալսարանական մասնագետներ, այլև հանրապետության մյուս բուհերից մասնագետներ, ինչպես նաև մեծ թվով քաղաքացիական ծառայողներ, որոնց հետ աշխատել են համալսարանի լավագույն դասախոսները: Այս ոլորտի հիմնական խնդիրներից մեկն այն է, որ առկա է որոշակի խզում հաստատված կարգի և ծրագրի միջև: Ծրագրի նպատակն է խթանել դասախոսների գիտական մոտիվացիան, մինչդեռ նրանք խուս են տալիս նույնիսկ արտերկրից հրավիրված մասնագետների դասերից:

Տեղեկատվական ռեսուրսների զարգացման ուղղությամբ համալսարանում վերջին տարիներին զգալի տեղաշարժեր են արձանագրվել և դա կապված է ոչ միայն SS կենտրոնի բացման հետ, այլ նաև տեղեկատվական դաշտը ընդլայնելու, տեխնիկական հագեցնելու, տեղեկատվական նոր ծրագրերը ներմուծելու հետ: Պետք է նշեմ մեկ կարևոր ծրագիր, որը պատրաստվում ենք իրականացնել Ռուսուկի համալսարանի հետ, որի հիմնական նպատակը դասախոսներին, ուսանողներին, <<

քաղաքացիներին տեղեկատվական ռեսուրսների, անվտանգության ոլորտում գիտելիքներ մատուցելն է ոչ միայն մեր մասնագետների, այլ նաև գերմանացի մասնագետների ուժերով: Իրականացնում ենք նաև օն-լայն ուսուցման խնդիրների ուսումնասիրում և այս ոլորտում պետք է խրախուսել հայկական վիրտուալ քոլեջի գոյությունը, որն իրականացվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության և Սկյուռքի նախարարության հետ համատեղ:

Գիտահետազոտական գործունեության ոլորտում պետական ֆինանսավորումը գոեթե հավասարապես բաշխվել է բնագիտական և հումանիտար ուղղությունների միջև և անցած ուսումնական տարում մենք այստեղ ունեցել ենք հստակ արտահայտված ձեռքբերումներ: Սակայն այստեղ մենք ունենք որոշակի խնդիրներ կապված գիտական աշխատանքների որակի հետ և հատկապես երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման հետ, որն էլ առաջիկա տարիների համար մեր գերխնդիրներից մեկն է լինելու: Գիտական քաղաքականության ուղղությամբ կարևոր քայլ էր ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ստեղծման մասին, որն այսօր լիազոք գործում է և հասցրել է իրատարակել մի շարք ծանրակշիռ հետազոտություններ:

Մեծածավալ է եղել անցած տարում մեր իրատարակչական գործունեությունը և կարող են ասել, որ համալսարանում երաշխավորված ոչ մի գիրք չտպագրված չի մնում:

Որոշակի աշխատանքներ են տարվել նաև սոցիալական քաղաքականության, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի ոլորտում: Այստեղ հատկապես ուզում են նշել Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ակտիվ գործունեության մասին գործատումների հետ աշխատանքի և մեր շրջանավարտների բազայի ընդլայնման ուղղությամբ:

Անցած ուսումնական տարում մենք վերջապես կարողացել ենք համալսարանի կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում ակտիվ ներգրավել մեր ուսանողությանը: Ակտիվ են գործել և Ուսանողական խորհրդությունը և Ուսանողական գիտական ընկերությունը: Հատկապես ուզում են շեշտել Ուսանողական գիտական ընկերության միջազգային կապերի ընդլայնումը, քանի որ նախորդ տարում մեր ուսանողների ուժերով կազմակերպվել և անցկացվել են մի քանի միջազգային գիտաժողովներ: Զափազանց կարևոր գործ է անում Մշակույթի կենտրոնը մեր ուսանողների գեղագիտական դաստիարակության, նրանց ժամանցի կազմակերպման գործում, որը զգալի տեղաշարժեր է առաջ բերում համալսարանում:

Անցած ուսումնական տարում ԵՊՀ իջևանի մասնաճյուղը ևս ունեցել է որոշակի ձեռքբերումներ և կարևոր այն է, որ այն բոլոր ուսումնական ծրագրերը, որոնք

դասավանդվում են Երևանում, ամբողջովին ներդրվել և իրականացվել են նաև Իջևանի մասնաճյուղում:

Համալսարանի գործունեության մասին մնացած տեղեկատվությունը առկա է տպագրված գեկուցում:

Ծնորհակալություն ուշադրության համար:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում: Զեկուցողին հարցեր չեղան:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) - Քանի որ մեր օրակարգի առաջին երեք հարցերը փոխշաղկապված են, ես առաջարկում եմ, որ ռեկտորը գեկուցի նաև երկրորդ և երրորդ հարցերը, այնուհետև կառաջարկենք ելութերի գրանցում, որից հետո կկայացնենք համապատասխան որոշումներ օրակարգի առաջին երեք հարցերի վերաբերյալ: Եթե համաձայն եք, օրակարգի երկրորդ հարցը գեկուցելու համար խոսքը նորից տրամադրենք պարոն Սիմոնյանին:

2. ԵՊՀ 2009թ. Եկամուտների և ծախսերի կատարողականի (հունվար-նոյեմբեր) հաստատում:

Զեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

Ա. Սիմոնյան - ԵՊՀ խորհրդի մեծարգո՛ նախագահ, խորհրդի հարգարժա՛ն անդամներ Եկամուտների և ծախսերի հաշվետվությունը նույնականացնելու մասնամասնությամբ Զեզ ներկայացված է և ես կանգ կառնեմ միայն մի քանի կարևոր դրույթների վրա: Այս տարվա տասնմեկ ամիսների ընթացքում բյուջեի մուտքերը կազմել են 6,3 միլիարդ, իսկ ելքերը՝ 5,7 միլիարդ: Դեկտեմբերի 17-ի դրությամբ Վճարովի ուսուցման ծառայության Եկամուտների հոդվածով կատարողականն արդեն կազմել է 100% և կարելի է ասել, որ տարեվերջին մուտքերը մեր կանխատեսումներով գերազանցում են նախատեսված գումարը՝ 87 միլիոն դրամով: Գործառնական Եկամուտների Այլ Եկամուտներ Ենթահոդվածի նախատեսված միջոցները գերազանցել են տասը միլիոն դրամով, որը պայմանավորված է հիմնականում բարեգործական գումարների ավելացումով: Ոչ գործառնական Եկամուտներ հոդվածի երեք Ենթահոդվածներում գերակատարվել են նախատեսված գումարները՝ մասնավորապես հաստատվել են դրամաշնորհային ծրագրեր, ֆինանսական միջոցների դեկավարման արդյունքում ավելացվել են բանկից ստացվող տոկոսավճարները:

Նշված տասնմեկ ամսում կատարվել են 5,7 միլիարդ դրամի ծախսեր, ինցը կազմում է տարեկան նախահաշվի 85,7%-ը: Ընթացիկ ծախսերի 64%-ը ուղղվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումների ծախսերին: Այստեղ մենք ունենք տագնապ կապված նրա հետ, որ միջազգային չափանիշներով աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումների ծախսերը չափությունը է գերազանցեն բուհի բյուջեի 60%-ը: Տպագրական միջոցներին ուղղված ծախսերի գերածախսը հիմնականում պայմանավորված է ԵՊՀ 90 ամյակին նվիրված նյութերի տպագրմամբ: Այն հիմնականում կոմպենսացվել է խնայողությունների հաշվին: Հիմնանորոգման ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 67,6%-ը: ԵՊՀ ֆակուլտետներին ընթացիկ տարում հատկացվել է 68,2 միլիոն դրամ ֆինանսական միջոցներ, որից այս պահին ծախսվել է 59,7 միլիոն դրամ, իսկ մնացածը կծախսվի մինչև տարեվերջ:

Դիմում եմ խորհրդի անդամներին հաստատելու ֆինանսական տարվա տասնմեկամյակի կատարողականը:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) -Պարոն Սիմոնյան, որքան է կազմում համալսարանի աշխատակցի միջին աշխատավարձը:

Ա. Սիմոնյան -Մեր միջին աշխատավարձը իննսուն հազար դրամ է: Պրոֆեսորի նոմինալ աշխատավարձը 180 հազար է, իսկ դոցենտինը 167 հազար: Գտնում եմ, որ անցած տարվա ընթացքում կատարված հավելումը մեր հնարավորության սահմաններում է եղել, սակայն դեռ բավարար չի կարելի դիտարկել և կաշխատենք հաջորդ տարվա ընթացքում հավելավճարների ձևով այդ բացը լրացնել: Մենք հասկանում ենք, որ աշխատավարձի բարձրացման հիմնական դերակատարը պետք է լինեն կոլեկտիվի անդամները և աշխատավարձի ֆոնդի դիվերսիֆիկացումը և աղբյուրների ավելացումը պետք է լինի հիմնականում գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացման և վճարովի կրթական ծառայությունների բազմազան դարձնելու ձանապարհով:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) –Ակնհայտ է, որ 180 հազար դրամը չի կարելի համարել բարձր աշխատավարձ, բայց դա մյուս կողմից հանրապետության միջին աշխատավարձի կրկնապատիկն է և այն ինչ-որ չափով կարելի է բավարար համարել, բայց, բնականաբար, մշտապես պետք է միտում լինի այն բարձրացնելու:

Պետք է միշտ որոնել եկամտի աղբյուրներ, բայց ոչ միշտ վարձավճարների բարձրացման միջոցով: Կա՞ն այլ հարցեր:

Ռ. Մարտիրոսյան - Պարոն Սիմոնյան, իսկ որքա՞ն է աշխատողների ընդհանուր թիվը:

Ա. Սիմոնյան - Մարդկանց ընդհանուր թիվը չորսը հազարից մի փոքր ավելի է:

Վ. Ղումանյան - Իսկ ինչքան է կազմում մեկ ուսանողի ծախսը և որքան է մեզ տրամադրվում պետական բյուջեի կողմից անվճար համակարգում սովորող ուսանողի համար:

Ա. Սիմոնյան - Մեկ ուսանողի միջին ծախսը, կոպիտ հաշվարկով, 341,200 դրամ է, իսկ պետությունից մեկ ուսանողի համար փոխհատուցվող նպաստը կազմում է 257,100 դրամ գումարած 64,800 դրամ կրթաթոշակը:

3. ԵՊՀ 2010թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

ԶԵԿ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

Ա. Սիմոնյան - Երևանի պետական համալսարանի 2010 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հավասարակշռված է: Եկամուտների և ծախսերի ցուցանիշը կազմելու է 7,166 միլիարդ դրամ: Նախահաշվի հոդվածների ցուցանիշները կազմվել են նախորդ տարվա կատարողականի ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և ալանավորումների հիման վրա: Նախահաշվի մուտքերի ցուցանիշները 7,1%-ով գերազանցում են նախորդ տարվա եկամտային մասի ցուցանիշները: Եկամտային մասի աճը կիմնականում վերաբերվում է վճարովի ուսուցման ծառայության եկամուտներին: Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասով այս տարուն փոփոխություններ չեն նախատեսվում: ԵՊՀ գործառնական գործունեության մասով ապահովվող մուտքերում նախատեսված է որոշակի աճ: 2010-ին աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումների ծախսերը աճելու են 278 միլիոն դրամով, որը պայմանավորված է պրոֆեսորադասախոսական անձնակազմին հավելավճարների ավելացմամբ: Նախատեսված է բարձրացնել մեկ ժամի

դրույքաչափը ժամավճարային դասախոսների համար: ԵՊՀ մեկ դրույքի նվազագույն աշխատավարձը կկազմի քառասուն հազար դրամ:

2010 թվականին ԵՊՀ ֆակուլտետներին ծախսերի համար հատկացվելու է 72,350 միլիոն դրամ, որը ավելացել է չորս միլիոն դրամով: Թվով 39 այլ կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվելու է 42 միլիոն դրամ, որը նույնպես գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշները:

Ընորհակալություն:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:

Գրանցվեցին Ա. Ավագյանը, Գ. Ղազինյանը, Ս. Հարությունյանը, Ռ. Ավագյանը, Ս. Գրիգորյանը, Ց. Ակուայանը, Տ. Սիմոնյանը և :

Ա. Ավագյան – Կրթաթոշակային ֆոդը կազմում է 4%: Մենք հնարավորություն ունենք այն ավելացնելու: Հինգ հազար դրամը այսօրվա պայմաններում բավական ցածր է և դուք ինչ ճանապարհներ եք այս հարցում տեսնում:

Ա. Սիմոնյան – Կրթաթոշակի ավելացման աղբյուրները, որոնք տրամադրվում են պետական միջոցներից ես հաջորդ տարի չեմ տեսնում, բայց ԵՊՀ-ն հնարավորություն ունի ոչ մեծ թվով ուսանողների, պարզեցնելով տրամադրելու գումարներ:

Գ. Ղազինյան – Ֆակուլտետներին տրամադրվող լիմիտային գումարները, որոնք չեն ծախսվում տվյալ տարում, արդյոք պահպանվում են, թե՝ ծախսվում են այլ նպատակներով: Եթե ոչ, ապա մենք փաստորեն ստիպված ենք այդ գումարները ամեն գնով ծախսել:

Ա. Սիմոնյան - Ամեն տարի այդ գումարների չափը ավելանում է և միջոցները արդյունավետ կառավարելու պարագայում կարելի է լուծել առաջ եկող խնդիրները: Եթե մենք տարեսկզբում պլանավորման վրա մի քիչ ավել աշխատենք, ապա բացասական միտումները կարող ենք հասցնել նվազագույնի: Մեր դժվարությունը նրանում է, որ գիտական թեմատիկ ֆինանսավորման ծախսերը դեկավարների կողմից նախատեսվում են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, որը բերում է Գնումների մասին օրենքի հետ հակասությունների, քանի որ մեծամասն մինչ այդ մենք արդեն համապատասխան գնումները կատարել ենք:

Ա. Հարությունյան – Պարոն Սիմոնյան, նախորդ տարիներին բյուջեում նախատեսված էին գումարներ համաֆինանսավորում պահաջող ծրագրերի համար: Սակայն այս տարի այդպիսի գումարներ չեն նախատեսվել: Ինչո՞ւ:

Ա. Սիմոնյան – Մենք այս տողով ծախսեր չենք նախատեսել, քանի որ չենք ունեցել այդպիսի ծրագրերի առաջարկություններ, սակայն կանխատեսելով, որ այդպիսի ծրագրեր հնարավոր են, շուրջ ութուն միլիոն ֆորս-մաժորային գումար ենք նախատեսել հենս այդպիսի ծրագրերի համար: Եվ եթե մենք այդպիսի ծրագրերի առաջարկություններ ստանանք, ապա անպայման կտրամադրենք համապատասխան միջոցներ:

Վ. Վարագյան – Պարոն Սիմոնյան, հարցս մասնավորապես վերաբերվում է Ուսանողական գիտական ընկերության ֆինանսական միջոցներին: Քանի որ Դուք Ձեր խոսքում ել նշեցիք, որ կազմակերպում են միջազգային գիտաժողովներ, ապա նախատեսված միջոցները արագ սպառվում են և տարվա մեջ մասը գումարները տրամադրվում են այլ աղբյուրներից և կամ ծրագրերը չեն իրականացվում: Իսկ բյուջեում հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների համագործակցության միջոցները կրկնակի աճել են: Հնարավոր չի դրանից ինչ-ո նի մաս տրամադրել Ուսանողական գիտական ընկերությանը:

Ա. Սիմոնյան – Հնարավոր է և այդպես էլ արվում է: Իսկ ուսանողական գիտական ընկերության գործուղումները կատարվում են գործուղումային միջոցների հաշվին: Ուգը անդամները այդ հնարավորությունները կումենան և գումարի առումով դուք մյուս տարի նեղարտելու առիթ չեք ունենա, ինարկե, այն պայմանով, որ այդ գործուղումները ծառայեն նպատակին և գիտաժողովները համապատասխանեն որոշակի գիտական մակարդակի: Ավելին, հեռակա ուսուցումից ստացվող գումարների նի մասը կուղղորդենք ուսանողական գիտական ընկերության ծախսերին:

Ռ. Ավագյան - Պարոն Սիմոնյան, քանի որ 2011 թվականին դպրոցները չեն ունենալու շրջանավարտներ, ապա մենք մեկ կուրս պակաս ենք ունենալու և եկամուտները մոտ 15%-ով նվազելու են, ինչպես եք պատկերացնում բյուջեի վիճակը:

Ա. Սիմոնյան – Մենք այս հարցը բազմիցս քննարկել ենք՝ մասնավորապես գիտական խորհրդում և ռեկտորների խորհրդու այս հարցը բարձրացրել է նաև ՀՀ Նախագահի հետ հանդիպման ժամանակ: Նախագահը կառավարությանը տվել է

անհրաժեշտ ցուցումները այդ դժվար կացությունը մեղմելու միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Մենք այդ նպատակով շատ սերտորեն աշխատում ենք Կրթության և գիտության նախարարության հետ: Կարծում եմ, որ մենք այդ տարի կունենանք մոտ 3,5 հազար դիմորդ, որոնք կլինեն նախորդ տարիների շրջանավարտներ, բանակում ծառայությունն ավարտած դիմորդներ: Ես գտնում եմ, որ կան նաև այլ աղբյուրներ այդ դժվար կացությունից դուրս գալու համար:

Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) – Խնդիրներ, իհարկե, կան և ոչ միայն դիմորդների թվի պակասելու հետ կապված, սակայն պետական ֆինանսավորումը ոչ միայն չի պակասելու, այլ նաև ավելանալու է: Սակայն մեր համապատասխան պետական մարմինները հաջորդ տարի պետք է շատ ավելի ակտիվ և սկզբունքային լինեն կրթության որակի ապահովման հարցերում: Իսկ ուսանողները, որոնք ցանկանում են գիտելիքներ ձեռք բերել, դրա հնարավորությունը պետք է ունենան այնպիսի կրթական հաստատություններում որոնք ի վհճակի են դա ապահովել:

Մ. Գրիգորյան - Ես կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել պրակտիկայի ծախսերին: Այս ծախսերը բավականին քիչ են, ուստինական պրակտիկան արդյունավետ կազմակերպելու համար՝ հաշվի առնելով նաև այն, որ պրակտիկան նաև մեծ դաստիարակչական նշանակություն է ունենում ուսանողների համար: Կխնդրեի, հնարավորության սահմաններում, ավելացնել պրակտիկայի ծախսերը, որպեսզի մենք ստիպված չլինեինք պակասեցնել պրակտիկայի տևողությունը: Եվ երկրորդ հարցն ուղղված է նրան, թե ինչով է պայմանավորված ֆակուլտետային լիմիտային գումարների անհամամասնությունը:

Ա. Սիմոնյան - Ես սկզբում բացատրեմ տարբերության պատճառը: Հարցը նրանում է, որ ֆակուլտետների լիմիտային գումարների համամասնությունները սահմանելիս մենք առաջնորդվում ենք դասախոսների և գիտաշխատողների թվով: Ինչ վերաբերվում է պրակտիկայի գումարներին, ապա նշված քսանմեկ միլիոնից ավել մենք տրամադրել չենք կարող: Այլ բան է, որ կարող ենք շինջուկատներ տանել հեռավոր շրջաններ և դրա համար գումարներ ստանալ բարեգործական կազմակերպություններից:

Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) – Այստեղ պետք է որդեգրել մեկ այլ մոտեցում: Պրակտիկան պետք է նաև եկամտաբեր լինի, կան մասնագիտություններ, որտեղ գործատում պետք է վճարի պրակտիկայի համար և ոչ թե բուհը: Այստեղ

ձեզանից է շատ բան կապված և որակյալ աշխատանք առաջարկելով տարբեր ձեռնարկությունների կարելի է փոխհատուցել պրակտիկայի ծախսերը: Աշխարհի բարձրակարգ բուհերի փորձը վկայում է, որ ավելի շատ մարդիկ ժամանակ են անցկացնում ոչ թե ուսումնական հաստատությունում, այլ այնտեղ, ուր հետո պետք է աշխատեն:

8. Ակուայան - ԵՊՀ թյուջեռամ նախատեսված է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ծախսեր: Կցանկանայի հետաքրքրվել, քանի որ Հայաստանում գործում են հարյուրավոր հասարակական կազմակերպություններ, ապա ինչ չափանիշներով է համալսարանը ընտրելու համագործակցող կազմակերպություններին և բաշխելու նախատեսված երեսուն միլիոն դրամը:

Ա. Սիմոնյան – Չափորոշիչները մեր անցյալի փորձն է: Արդեն քանի տարի է մենք այդահիսի գործումնեություն իրականացվում ենք և գումարը կրկնապատկվել է, քանի որ մենք արդեն համագործակցության որոշակի պարտավորություններ ենք ստանձնել որոշ հասարակական կազմակերպությունների նկատմամբ:

Տ. Սիմոնյան - Գրադարանային ծախսերի գումարը չի փոխվել, այնինչ ուսանողները կարիք ունեն նորացվող գրականության: Ինչպես կբացատրեք:

Ա. Սիմոնյան – Խոսքը թերթերի և գրքերի բաժանորդագրության մասին է, ինչ վերաբերվում է էլեկտրոնային ռեսուրսներին, ապա դա չի մտնում այս գումարների մեջ: Իսկ մենք ավելի կենտրոնացած ենք էլեկտրոնային ռեսուրսների ավելացման ուղղությամբ և ֆակուլտետներից եկող բոլոր պատվերները կատարվում են: Իսկ գոքերի մեծ մասը մենք ստանում ենք բարեգործական խողովակներով, որը շարունակվելու է:

Ս. Հովսեփյան - Պարոն Սիմոնյան, ԵՊՀ ռազմավարության տրամաբանությունը ենթադրում է հանրային կապերի զարգացում, մարկետինգ և նախաձեռնողական աշխատանքներ, մինչդեռ համալսարանը դրա համար տրամադրում է փոքր գումար: Հնարավոր չէ՝ այդ գումարի չափը վերանայել:

Ա. Սիմոնյան – Եթե խորհուրդը նման հանձնարարական տա, ապա կվերանայենք, սակայն ես կարծում եմ, որ այսօրվա դրությամբ այդ գումարը բավարար է:

Հարցերից հետո հայտարարվեց ելույթների գրանցում։ Գրանցվեցին գ. Պետրոսյանը, Յու. Վարդանյանը, Ա. Ավագյանը,

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ - ԵՊՀ խորհրդի մեծարգո՞ն՝ նախագահ, խորհրդի հարգարժա՞ն անդամներ, հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողները միշտ բարձր են պահել մեր ֆակուլտետի պատիվը և արժանացել տարբեր մրցանակների: Այսօր վաթսունից ավել շրջանավարտներ աշխատում են Արտաքին գործերի նախարարությունում: Սակայն ֆակուլտետում կան մի շարք դժվարություններ հատկապես միջազգայնագետ ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման գործում: Նրանք արտադրական պրակտիկան անցկացնում են ԱԳՆ-ում և ԱԺ-ում, համագործակցում ենք նաև Սփյուռքի նախարարության հետ: Սակայն վերոհիշյալ գերատեսչությունները մեծ թվով պրակտիկանտներ չեն կարողանում ընդունել: Մեծարգո՞ն Նախագահ, խնդրում են Ձեր անմիջական աջակցությունը թույլատրելու մեր գերազանց առաջադիմությանք և երկուսից ավել օտար լեզուների տիրապետող ուսանողներին արտադրական պրակտիկան անցնելու արտերկրի << դեսպանություններում և հյուպատոսական իիմնարկներում: Դրանով ուսանողները խորությամբ և համակողմանիորեն կծանոթանան հայ համայնքներին, ձեռք կբերեն դիվանագիտական հմտություններ: Այս հարցի լուծմամ ճանապարհին էական դժվարությունը ֆինանսական բնույթի է, սակայն մենք ունենք ուսանողներ, որոնք պատրաստ են իրենք հոգալ իրենց ծախսերը: Համոզված են, որ արտասահմանում գտնվող դեսպանություններում անցկացվող պրակտիկան այն արդյունավետ ճանապարհը կլինի, որով << արտաքին գերատեսչությունը կհամարվի է ավելի բարձրորակ կադրերով:

Ավարտելով խոսքը՝ առաջարկում են Արամ Սիմոնյանի կատարած աշխատանքը հաշվետու տարում գնահատել արդյունավետ և միանգամայն բավարար համալսարանի այսօրվա խնդիրները լուծելու և հետագա աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ:

Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) – Մենք պատրաստ ենք քննարկել այդ հարցը և եթե ֆինանսական համապատասխան միջոցներ կան, սակայն չեմ կարծում, որ << դեսպանությունները պրակտիկայի անցկացման ավելի արդյունավետ վայր են, քան Ազգային ժողովը, Արտաքին գործերի նախարարությունը, կամ << Նախագահի աշխատակազմը: Միգրացե լեզուն կատարելագործելու համար կարելի է մեկնել Ֆրանսիա, Գերմանիա կամ Միացյալ Թագավորություն, բայց չեմ կարծում, որ Զեր ֆակուլտետի համար առաջնայինը լեզու կատարելագործեն է, այլ դիվանագիտական

հմտություններ ձեռք բերելը: Իսկ քանի ուսանող կա, որ երկու օտար լեզվի է տիրապետում և գերազանց է սովորում:

Գ. Պետրոսյան - Յուրաքանչյուր կուրսում տասից տասնհինգ հոգի:

Ս. Սարգսյան (խորիրդի նախագահ) - Ես կիանձնարարեմ Վիգեն Սարգսյանին, որպեսզի զա, տեղում ուսումնասիրի և նախագահականի համար ընտրի տասը հոգի, որ կարող են պրակտիկա անցնել և մեզ օգուտ բերել, իսկ Զեր առաջարկությունը մենք կը նարկենք:

Յու. Վարդանյան – Հայաստանի հանրապետության մեծարգության նախագահ, ԵՊՀ խորիրդի հարգարժան անդամներ, ժամանակի սղության պատճառով ռեկտորը մանրամասը չնշեց կատարված բոլոր միջոցաւումների մասին, սակայն ուզում եմ նշել, որ շատ մեծ աշխատանք է կատարվել: Ես կկարևորեի նոր կրեդիտային համակարգին անցումը, որի սահմաններում տպագրվել են յուրաքանչյուր ֆակուլտետի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ձեռնարկներ: Դա հնարավորություն ստեղծեց իրականացնել ուսումնական գործընթացի անմիջական վերահսկողություն: Բացթողումների մեջ ուզում եմ նշել, որ համալսարանը մեծ գործ ունի կատարելու որակի բարձրացման հարցում, սակայն կա մի քան, որը համալսարանից կախված չէ. դա երկրի սոցիալ-տնտեսական վիճակն է, գործատուի ոչ ամբողջական առակայությունը: Ելույթումս կցանկանայի բարձրացնել երկու հիմնական հարցեր:

Այսօր համալսարանում միայն քառորդն է սովորում բնագիտական թեսում, սակայն զարգացած սոցիալիզմի տարիներին պատկերը լրիվ հակառակն էր: Հիմա նույնիսկ այս մեկ քառորդը պահպանելը համալսարանի համար մեծ բեռ է, քանի որ բնագիտության ուղղությամբ մասնագետների պատրաստումը պահաջում է մեծ ծախսեր և պետք է անպայման շնորհակալություն հայտնել կառավարությանը, որ միջոցներ է գտնում բնագիտությունը պահելու: Մասնագետներ պատրաստելու հարցում կա մեկ մեծ դժվարություն, արդեն քսանինգ տարի է մեր լաբորատորիաները չեն նորացվել և այսօր բնագիտության զարգացման արագ տեմպերի ներքո այդ հնամաշ լաբորատոր սարքերով մասնագետներ պատրաստելը շատ դժվար է: Համալսարանը փորձում է այդ բացը մասնակի լրացնել, սակայն դա քիչ է և կխսդրեի գոնե հաջորդ տարվա բյուջեում նախատեսել պետական միջոցներ այդ բացը փակելու համար: Մենք ինքներս էլ ճանապարհներ ենք գտնում, օրինակ օգտագործում ենք Սիմովսիս ֆիրմայի և ՀՀԳԱԱ ռադիոֆիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտի հնարավորությունները, սակայն կառավարության օգնության կարիքը շատ ունենք:

Երկրորդ հարցը, որ կցանկանայի բարձրացնել կապված է նրա հետ, որ օրենքի մակարդակով պետք է ամրապնդվի Երևանի պետական համալսարանի տեղն ու դերը: Կրթության մասին օրենքի ուժերորդ կետում ամրագրված է, որ համալսարանի կաղզավիճակը որոշվում է կառավարության հատուկ որոշմամբ, սակայն անցել է ավելի քան տասը տարի, սակայն որոշում դեռ չի եղել: Եվ այսօր համալսարանականները խնդրում են այդ կետը բացել և ինքնուրույն օրենք դարձնել՝ ընդունել համալսարանի մասին օրենք: Նմանատիպ օրենք կա Ռուսաստանի Դաշնությունում Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանների համար: Կան այլ հարցեր, որ կցանկանայի բարձրացնել, օրինակ հանրակրթական դպրոցի այսօրվա վիճակը և այլ հարցեր ևս: Մենք կցանկանայինք ֆակուլտետում հանդիպել Ձեզ հետ, պարոն Նախագահ, քննարկել այդ հարցերը: Քանի որ մեր նիստը ամանորի շեմին է, իսկ ամանորին ընդունված է ասել բարեմաղթանքներ, ապա ես կցանկանայի որ նոր տարում Ձեր նախաձեռնությունները հաջողությամբ պակվեին, որը անխուսափելիորեն կանրադառնար հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի վրա, իսկ դա էլ հետևաբար կբերի կրթության և գիտության վիճակի բարելավման:

Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) – Պարոն Վարդանյան, մենք արդեն խոսել ենք այդ հարցի հետ կապված և որոշել ենք, որ ռեկտորատը ծրագիր պատրաստի բնագիտական ֆակուլտետների հետ՝ հասկանալու, թե ինչ կարծենա ուսումնական լաբորատորիաների ամբողջական թարմացումը: Մի քան կարող եմ խոստանալ, որ ինչքան համալսարանը ներդնի այդ գործի մեջ, նույնքան կներդնի նաև պետությունը և նույնքան էլ՝ հիվանավորները: Մենք ամենաշատն ենք մտահոգված բնական գիտությունների զարգացման խնդրով և գիտենք, որ դա շատ սերտ կապված է երկրի ապագայի հետ: Եվ այսօր էլ երկու մեծ ծրագիր է քննարկվում հանրապետությունում արագացուցիչների պատրաստման: Եթե այս ծանր պահին մենք գտնում ենք միջոցներ և արագացուցիչներ ենք ներմուծում հանրապետություն, ապա դա խոսում է մեր լրջության մասին: Իսկ այն, որ այդ երկու ծրագրերից մեկն անպայմանորեն իրականացվելու է, դա հաստատ է: Մենք շահագրգորված ենք բնագիտության զարգացմամբ, սակայն միայն մեր շահագրգորվածությունը քիչ է, պետք է բոլորիդ սատար լինելը: Իսկ համալսարանի մասին առանձին օրենքի ընդունումը, կարծում եմ, ձիշտ չէ, քանի որ մյուս բուհերը դա ձիշտ չեն ընկալի: Մենք ի վիճակի ենք առանց առանձին օրենք ունենալու մեր պարտավորությունը Մայր բուհի նկատմամբ իրականացնելու:

Ա. Ավագյան - Ես պատահական չեմ, որ հարցու ուղղեցի ուսանողական թոշակների բարձրացման մասին, քանի որ ուսանողությունը խիստ դյուրընկալ խավ է ցանկացած փոփոխությունների նկատմամբ: Համալսարանը մի օրգանիզմ է, որը պետք է կարողանալ կառավարել ընթացողությամբ, իմացությամբ, համակողմանի ժամաշմամբ և մանրութեների մեջ խորանալով: Ի շնորհիվ մեր ռեկտորի աշխատանքի համալսարանը գնալով իր մեջքը շտկում է: Այստեղ խոսք եղավ կրթության նոր սերնդի մասին: Բավականին մեծ բացասական դեր է խաղում մեր հեռուստատեսությունը, որն ուղղակի չարիք է: Դրա հետևանքով ուսուցիչը դպրոցում վախենում է խոսել ազնվությունից, պատասխանատվությունից, քանի որ եթերը հակառակն է քարոզում: Այս խնդիրը վաղուց հասունացել է և մենք պետք է դրա լուծումը գտնենք և հաղթահարենք ամենաթողությունը այս ոլորտում:

Կուգենայի երկու առաջարկ անել. մեկը ընտանեկան ծառայության ստեղծումն է: Զորակոչի տարիքի երիտասարդը իր ընտանիքի հետ մեկնում է սահմանամերձ գոտի, բնակվում այնտեղ, ամրապնդելով սահմանը: Երկրորդը վերաբերվում է մեզ շրջապատող միջավայրի մաքրությանը և կառաջարկելի ստեղծել էկոլոգիական ոստիկանություն: Շատ կցանկանայի նաև, որ այս տարի միջոցներ գտնվել մեր համալսարանի լողավազանը վերանորոգելու և շահագործելու ուղղությամբ, որը բացի տնտեսական օգուտից, ռազմավարական նշանակություն չունի:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Կցանկանայի նշել, որ Զեր նշված ձևով սահմանամերձ բնակավայրերը բնակեցնելն անհնար է, որովհետև մենք տարիներ առաջ ունեինք նման համակարգ: Ով գնում էր մանկավարժական գործունեությամբ զբաղվելու, ազատվում էր ծառայությունից: Բայց բազմաթիվ ստուգումները ցույց տվեցին, որ ոչ ոք չէր գնում, այլ պարզապես գրանցված էր: Կարող ենք ուժեղացնել վարչարարությունը, սակայն ի՞նչ կտա դա մեզ:

Համաձայն եմ, որ մենք բնապահպանական խնդիր ունենք, սակայն դա նախ և առաջ մտածելակերպի խնդիր է: Ոստիկանություն ստեղծելով չեմ, որ մենք այդ խնդիրը կարող ենք լուծել, այլ համապատասխան ծառայությունը նորմալ կազմակերպելով: Երբ կունենանք միջազգային որակի օպերատոր, որը կգբաղվի սանմաքրմամբ և աղբի վերամշակմաբ, որոշակիորեն կլուծենք այդ խնդիրը:

Ա. Մկրտիչյան – Հավանության ենք տալիս ռեկտորի հաշվետվությանը և պետք է այն հաստատենք: Մենք նաև պետք է խոսենք ապագա անելիքների և հնարավոր խոչընդոտների հաղթահարման մասին: Ցանկանում եմ նշել, որ եռաստիճան համակարգի ներդրումը որակական նոր հանգույանի է հասել: Շուրջ տասը տարի

առաջ մենք սկսել ենք պատրաստել մեր մագիստրոսներին և արդեն ունենք զգալի թվով փայլուն մագիստրանտներ, որոնք մեր գիտության մասնագիտական ներուժն է լինելու: Բայց միևնույն ժամանակ ոչ միայն մեր կարևոր ձեռքներումը ոչ միայն մեր ուսանողներն են, այլև մեր շրջանավարտները: Մենք պարտավորություններ ունենք նաև մեր շրջանավարտների նկատմամբ: Պարոն Սիմոնյանը իր ելութուն որպես գերակայություն նշեց երիտասարդ կադրերի պատրաստումը և այս տեսակետից անհրաժեշտ են որոշակի ինստիտուցիոնալ փոփոխություններ նաև արտահամալսարանական միջավայրում: Մասնավորապես արդեն ժամանակն է լրացումներ կատարել օրենքում և հստակեցնել բակալավրիատի և մագիստրատուրայի դիպլոմների կարգավիճակները: Մյուս խնդիրը որն առավել իրատապ է մեր սոցիոլոգիայի շրջանավարտների համար այն է, որ մենք պատրաստում ենք մասնագետներ PR գծով, սակայն << մասնագիտությունների ցանկում այդպիսի մասնագիտություն չկա և այստեղ ևս որոշակի փոփոխության կարիք կա: Սակայն մեր ամենամեծ հիմնախնդիրը կրթական երրորդ աստիճանի հետ է կապված: Մենք արդեն ունենք մեծ թվով ասպիրանտներ, որոնք որոշակի տագնապալի իրավիճակում են հայտնվել: Վերջին երկու տարում ոչ մի սոցիոլոգ չի կարողացել իր գիտական հետազոտության արդյունքները չի կարողացել ներկայացնել պաշտպանության, քանի որ խնդիրը ԵՊՀ-ում սոցիոլոգիայի գծով աստիճաններ շնորհող խորհրդի ստեղծումն է: Ես միանում եմ մեր ասպիրանտների խնդրանքին և խնդրում Ձեր աջակցությունը այս խնդրի լուծման ուղղությամբ:

Ա. Մելքոնյան - Մեծարգո Նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, պարոն Սիմոնյանը նշեց առաջին վիրտուալ դասագրքի ստեղծման մասին: Ես պատիվ ունեմ հայոց պատմության բաժինը պատրաստող խոամբը ներկայացնել և պետք է ասեմ որ լավ արձագանքներ կան: Ցավոք սրտի սփյուռքում հայկական դպրոցը կիսով չափ է հայկական դպրոց, քանի որ առարկաներն անցնում են տվյալ երկրի լեզվով և միայն հայոց լեզու, հայոց պատմություն ապարկաներն են մայրենիով են անցնում: Կարծում եմ, որ օգտագործելով այս փորձը պետք է նաև մյուս առարկաների գծով մայրենի լեզվով դասագրքեր ստեղծել: Ինչ կարծիքով այս աշխատանքը Հայաստանից պետք է կատարվի, որպեսզի հակազդեցությունը քիչ լինի:

Վ. Ռումանյան - Ես առաջարկում եմ տարվա մեջ երկու նիստ անել, մեկը ուսումնական տարվա վերջում և մյուսը ֆինանսական, քանի որ երկու բնույթի հարցեր են քննարկվում: Ինչ վերաբերվում է բյուջեի գումարներին, մենք հասկացանք որ դրանք քիչ են և ես գիտական խորհրդում դիմել եմ մեր մեծ հումանիտար ֆակուլտետներին

աջակցելու որոշ բնագիտական միջոցառումների: Հաշվի առնելով այս, առաջարկում են հավանություն տալ գործադիրի գործումնեությանը:

Մ. Գրիգորյան – Լսեցինք օրակարգի երեք հարցերը և առաջարկում են կատարված աշխատանքը գնահատել բավարար: Մենք երիտասարդներին ոչ միայն կորություն ենք տալիս, այլ մեծ դերակատարում ունենք նրանց դաստիարակության հարցում: Մեր ուսուցիչները դաստիարակել են մեզ իրենց բարոյահոգեբանական կերպարով, սերմանել են հայրենասիրություն և այլ բարոյական արժեքներ: Այդ տեսակետից մենք այսօր որոշակի խնդիրներ ունենք: Մենք գիշում ենք մեր ուսուցիչներին, սակայն որքան էլ լավ մասնագետներ ունենանք, եթե նրանք չունենան բարոյահոգեբանական արժանի պատկեր, ապա ուսանողների դաստիարակության հարցը կազմակերպելու դժվարանում է: Մեծ դրական քայլ է նաև ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցումը, որը թույլ է տալիս վերհանել շատ խնդիրներ: Ես ինքս մանրամասը ծանոթանում եմ բոլոր կարծիքներին, որտեղ կան նաև շատ ցավալի փաստեր և անկեղծ դիտողություններ:

Մենք այս տարի ուսումնական պրակտիկան ցանկանում ենք կազմակերպել ազատագրված տարածքներ քարվաճառում և Բերդաձորում, որպեսզի մեր հարյուրավոր ուսանողները որոշակի շամանակ լինեն այդ վայրերում, կապվեն այդ հողին, գնահատեն, սիրեն և հետազայում գուցե և վերադարնան և բնակվեն այդ վայրերում: Մենք այս տարի այդ վայրերում երկու անգամ կազմակերպել ենք ծառատումկ, որը մեծ արձագանք ստացավ մեր ուսանողների կողմից:

Օգտվելով առիթից շնորհավորում են մեր բոլոր կոլեգաներին Նոր տարվա և Սուրբ Ծննդյան կապակցությամբ, ցանկանում հաջողություններ:

Ն. Մարտիրոսյան – Հաշվետու ժամանակաշրջանը բացահիկներից մեկն էր ԵՊՀ-ի կյանքում, քանի որ նշվում էր Մայր բուիի իննսուն ամյակը: Ես կարևորում եմ շատ մեր հանրության աչքում համալսարանի տեղի և դերի գիտակցումը և արժեքումը: Ուրախությամբ փաստում եմ, որ հոբելյանական միջոցառումների շարքում նշվեց նաև ժուրնալիստիկայի ֆակուլտետի հիմնադրման տասնամյակը: Բացվեց նաև ԵՊՀ պատմության թանգարանը, որը բացահիկ իրողություն էր մեր համար: Չեն կարող չնշել, որ մեր ֆակուլտետը գտնվում է յոթերորդ մասնաշենքում, որտեղ նաև գտնվում են Ռուս բանասիրության, Արևելագիտության և Ռոմանագերմանական բանավիրության ֆակուլտետները: Մասնաշենքի վիճակն անմիտար է և կխնդրեի հնարավորության պարագայում այս տարվանից ծերնամուխ լինեինք այդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքներին:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) - Պարոն Մարտիրոսյան, ռեկտորը նոր հայտնեց, որ հաջորդ տարվա բյուջեում այդ գումարները նախատեսված են և զարմանալի է, որ Դուք այդ մասին չգիտեք: Վստահեցնում եմ, որ նախատեսվածի համաձայն այդ աշխատանքները կկատարվեն:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը առաջարկեց քվեարկության միջոցով ընդունել համապատասխան որոշումներ օրակարգի առաջին երեք հարցերի վերաբերյալ.

1. Հաստատել ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2008/09 ուսումնական տարվա գործումների վերաբերյալ և այն գնահատել բավարար:

Կողմ՝ 60, Դեմ՝ 0, Զերնպահ՝ 0:

2. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի 2009թ. եկամուտների և ծախսերի կատարողականին և այն գնահատել բավարար:

Կողմ՝ 60, Դեմ՝ 0, Զերնպահ՝ 0:

3. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2010թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջե)` համաձայն հավելվածի: Հանձնարարել ԵՊՀ ռեկտորին 2009թ. ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Կողմ՝ 60, Դեմ՝ 0, Զերնպահ՝ 0:

4. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թթ.) հաստատում:

Զեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Միհնոնյան

Ա. Միհնոնյան - Մեծարգո Նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, ձեր հաստատմանն ենք ներկայացնում ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը, որն ընդգրկում է 2010-2014 թվականները: Այս փաստաթղթում ներկայացված են համալսարանի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական նպատակները՝ բարձրորակ կրթություն, բարձրակարգ հետազոտություններ և նորարարություն, հանրային ներգրավում և ծառայություններ, ինչպես նաև աջակցող նպատակները, այն է՝ որակյալ կադրային ներուժ, որակյալ

Ենթակառուցվածքներ, որակյալ ծառայություններ: Այս ծրագրում հստակեցված են նաև ընթացիկ գերակայություններ՝ բազմազանեցված մուտք և համապատասխանություն, ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում, ռազմավարական գործակցություն և միջազգայնացում: Ծրագրում մանրամասն ներկայացված են սույն նպատակների իրականացման խնդիրները և անհրաժեշտ գործողությունները: Մենք, իհարկե, հասկանում ենք, որ ծրագիրը ռազմավարական է և միայն համալսարանի միջոցներով և ուժերով լավագույնս չենք կարողանա այն իրականացնել, բայց ծրագրի իրականացման հարցում համալսարանը հայցում է նաև պետության օգնությունը՝ հանձինս կառավարության, կրթության և գիտության նախարարության նաև այստեղ նշված են այն համագործակցության ուղիները, որ միշտ եղել է հանրապետության այլ բուհերի հետ:

Ծնորհակալ եմ, եթե հարցեր կան պատրաստ եմ պատասխանել:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում: Զեկուցողին հարցեր չեղամ:

Հայտարարվեց ելույթների և առաջարկությունների գրանցում: Գրանցվեցին Հ. Սարգսյանը, Յ. Ակուայյանը, Կ. Խաչատրյանը:

Հ. Սարգսյան – Քանի որ մենք նախորդ տարի խորհրդի նիստով հաստատել ենք ռազմավարության հիմնադրույթները, ապա այս տարվա որոշման մեջ առաջարկում են շտկել, որ հաստատում ենք ռազմավարությունը և ռեկտորին հանձնարարում ընթացիկ կառավարումն իրականացնել առաջնորդվելով ռազմավարությամբ և ոչ թե հիմնադրույթներով:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Չեմ առարկում:

Յ. Ակուայյան – Ծնորհակալություն: Խորհրդի մեծարգը Նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, առաջարկվում ենք Հիմնարար արժեքները մասում ավելացնել և երկուսը՝

1. *Համալսարանականների մասնակցություն բաժնում՝ Համալսարանը էապես կարևորում է ուսանողների, շրջանավարտների և աշխատակիցների մասնակցությունը Համալսարանին վերաբերող հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունմանը, ինչը հանդիսանում է բազմակարծության և թափանցիկ գործընթացների հիմնական նախապայման: Համալսարանը ձգտում է ստեղծել բազմակողմանի և մշտական կապ իր շրջանավարտների հետ, այդ կապը*

նպատակառությունը համալսարանի գարզացմանն ու շրջանավարտների հարատև կրթության ապահովմանը: Ուսանողների ինքնավարությունը, մասնակցությունը համալսարանի կառավարմանը բարձրացնում է ուսանողի ինքնագիտակցությունը, արժանապատվության և քաղաքացիական պատասխանատվության զգացումը:

2. Ինչպես նաև **Կարծիքների բազմազանություն, ապաքաղաքական և ապակրոնական միջավայր բաժնում ավելացնել՝ Համալսարանում չի թույլատրվում հասարկական-քաղաքական և կրոնական կազմակերպությունների գործունեությունը, Համալսարանը քաղաքական քարոզչությունից ազատ տարածք է: Համալսարանը արժեվորում է բազմակարծությունն ու ժողովրդավարական միջավայրը:**

Առաջարկում եմ, որ այս երկու կետերը ընդգրկվեն ռազմավարությունում:

Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ) - Համաձայն Ե՞ք: Նորմալ է: Այլ առաջարկություններ կա՞ն:

Կ. Խաչատրյան – Ծնորհակալություն: Եվս մեկ առաջարկ կա ընթացիկ գերակայությունները համարելու հետ կապված՝ երկու մասից բաղկացած: Առաջինը վերաբերում է ուսանողների ինքնակառավարման գարզացմանը, երկրորդը կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Ճիշտ է ռազմավարության 8.4թ կետում հպանցիկ անդրադարձ կատարվում է կոռուպցիոն ռիսկերին, սակայն մեր խորին համոզմանք միայն ննան ձևակերպումը բավարար չէ: Առաջարկում ենք ընդգրկել չորրորդ գերակայությունը հետևյալ վերտառությամբ՝ **Ուսանողների ինքնակառավարում և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում**: Ավելացնելով խնդիր x ա) Զարգացնել ուսանողական կազմակերպությունների ներուժը, խրախուսել ներհամալսարանական կյանքում ուսանողների մասնակցությունը, հզորացնել համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունները: Բնականաբար ռազմավարական այս խնդիրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ապահովել Համալսարանի և ֆակուլտետների բոլոր կառավարման կոլեգիալ մարմիններում ուսանողների համար օրենքով նախատեսված քվոտաները:
2. Աջակցել կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների աշխատանքներին, համապատասխան ներածական և օժանդակ միջոցառումներ կազմակերպել նրանց համար:
4. Բարելավել ուսանողական կազմակերպությունների գործունեության պայմանները, աջակցել նրանց ինստիտուցիոնալ գարզացմանը:

5. Խրախուսել ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին մասնակցող ուսանողներին:
6. Զարգացնել ուսանողների հանրապետական և համահայկական կազմակերպությունների ցանցը, աջակցել նրանց միջբուհական համագործակցությանը:
7. Ստեղծել ուսանողների իրավունքների պաշտպանի (ուսանողական օմբուդսմենի) ծառայություն: Այս կետը ընդգրկված է 6ա խնդրում:
8. Կազմակերպել ուսանողական ժամանցը, աջակցել ուսանողների ներգրավումը մշակութային կյանքին:

Եվ երկրորդ մասով Խնդիր X բ) Աջակցել կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բարձրացնել դրանց թափանցիկությունը և վերահսկելիությունը:

1. Զեավորել կառուպցիոն ռիսկերի նվազեցման խնդիրներով գրադարձ խորհուրդ և մշակել համապատասխան աշխատանքային ծրագիր:
2. Ներդնել Էլեկտրոնային ստուգման գրքույկների համակարգ:
3. Քննությունների արդյունքները տեղադրել ինտերնետային կայքում:

Ես դադարեցնեմ թվարկումը և պարզաբանեմ, թե ինչու ենք այսօր հնչեցնում այս հարցերը, քանի որ ԵՊՀ գիտական խորհրդում ընդգրկված են միայն Ուև և ՈւԳԸ նախագահները, իսկ այստեղ հնչեցվում է ուսանող ներկայացուցիչների կարծիքը:

Ա. Սիմոնյան - Ես առաջարկում եմ, որ Կ. Խաչատրյանը այդ դիտողությունները հանձնի մեզ և հանձնաժողովը, որը նայել է ռազմավարության վերջնական խմբագրությունը, նորից վերանայի դրանք Ուսանողական գիտական ընկերության առաջարկությունները և եթե դրանք համահունչ լինեն ռազմավարական ծրագրի կետերին, ապա դրանք կընդգրկվեն ծրագրում, եթե, իհարկե, Խորհուրդն այսօր այդահիմքով որոշմում ընդունի:

Ա. Սարգսյան (Խորհրդի նախագահ) - Շատ լավ, ես կարծում եմ, որ ընդունելի առաջարկ է: Ովքե՞՞ր են կողմ այսպիսի առաջարկությանը. այսինքն հաստատում ենք և թույլ ենք տալիս հանձնաժողովին որոշակի ճշգրտումներ մտցնի, եթե ընդհանուր գաղափարախոսությանը չի հակասում:

ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց հաստատել Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը 2010-2014 թվականների համար՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 60, Ղեմ՝ 0, Զեռնպահ՝ 0:

5. Ընթացիկ հարցեր

Նախագահությունը ընթացիկ հարցերի վերաբերյալ առաջարկություններ չներկայացրեց: Ընթացիկ հարցի առաջարկությամբ հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը:

Ա. Սիմոնյան - Մեծարգո Նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, հոբելյանի կապակցությամբ Երևանո պետական համալսարանը ընդունեց իր պարզեցների նոր կարգ և ունեցավ իր նոր պարզեցները, որոնք պատվիրվեցին Սանկտ-Պետերբուրգի դրամատանը և ԵՊՀ Գիտական խորհրդի որոշումն եմ ցանկանում իրապարակել, այն է՝ համալսարանի բարձրագույն պարզեց՝ «Պատվո Նշան» շքանշանը, Երևանի պետական համալսարանի խորհրդի նախագահ, Հայաստանի հանրապետության Նախագահ պարուն Սերժ Սարգսյանին հանձնելու մասին, նրա կատարած հսկայական հասարակական, քաղաքական գործունեության, կրթության և գիտության բնագավառում ունեցած ծառայությունների համար: Թույլ տվեք համալսարանականների անունից Զեզ հանձնել 001 համարի շքանշանը:

Ա. Սարգսյան (խորհրդի նախագահ) - Ծնորհակալ եմ: Մինչ իրաժեշտ տալը ես ցանկանում եմ շնորհավորել ձեզ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, ցանկանալ որպեսզի 2010 թվականը և ձեզ համար, և մեր ժողովրդի համար լինի հաջողությունների տարի, լինի վերականգնման տարի: Ցանկանում եմ, որ ձեր ընտանիքներին միշտ ուղեկցի խաղաղությունը, հաջողությունը, ցանկանում եմ, որ մենք մեր ակտիվ դիրքորոշմամբ կարողանանք 2010 թվականը դարձնել վերականգնման տարի: Գաղտնիք չեմ, որ 2009 թվականը ծանր տարի էր տնտեսության համար և ոչ միայն տնտեսության, այլ նաև ներքաղաքական և արտաքին քաղաքականության խնդիրներում, մենք ունեցանք բավականաչափ մարտահրավերներ և մեր ամենամեծ ձեռքբերումն այն է, որ ունենալով տնտեսության մինչև 15% նվազում, կարողացանք չկրաքատել ոչ մի սոցիալական ծրագիր: Ընդհակառակը, ավելացան աշխատավարձերը, մենք կարողացանք հայթիայթել լրացուցիչ միջոցներ, որպեսզի առանց բարդության իրականացնենք կառավարության խոստումները, ծրագրերը:

Սա միայն մեր խնդիրը չէ, այլ համաշխարհային է և չնայած որ մեր ընդդիմախոսները ցանկանում են ներկայացնել, որ մեր մոտ անկումն ամենամեծն է, բայց դուք բոլորդ էլ ինֆորմացիայի տիրապետող մարդիկ եք և հստակ գիտեք, որ դա այդպես չէ: Կան հստակ ցուցանիշներ, որ դրականորեն են բնութագրում մեր

տնտեսությունը: Միայն կնշեմ, որ բանկերում ավանդներն աճել են 35%-ով միայն այս տարվա մեջ: Սա ցուցանիշ է, որը մասսամբ բնութագրում է մեր տնտեսությունը 2009 թվականին: Ես չեմ կասկածում, որ 2010-ին մենք կարողանալու ենք վերականգնել մեր տնտեսության գոեթե բոլոր ոլորտները, աճ ենք ունենալու գյուղատնտեսությունում, արդյունաբերությունը հասցնելու ենք մինչ ճգնաժամը ունեցած մակարդակին, իսկ սպասարկման ոլորտը կարձանագրի ավելի մեծ աճ: Ես կարծում եմ որ պետք է դրականորեն տրամադրվենք, շնորհավորում ենք բոլորիդ և մաղթում հաջողություն:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

25.12.2009թ.